

**ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԽՆԱՍՔԻ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀԱՅՏՆՎԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ա. Հ. Սվաջյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի
հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, հատուկ դպրոցներ, ներառական կրթություն իրականացնող դպրոցներ:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի ընտանիքում ապրելու, դաստիարակվելու, ծնողական խնամքից ու հոգատարությունից օգտվելու գաղափարախոսությունը դրված է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմքում, միաժամանակ, երեխայի շահերի տեսանկյունից կարևորվում է երեխայի հատուկ խնամք ստանալու, լիարժեք ֆիզիկական, հոգեկան, բարոյական, մտավոր և սոցիալական զարգացման իրավունքների իրականացումը:

Սակայն Հայաստանում առկա աղքատության մակարդակն ուղղակիորեն ազդում է հայ ընտանիքի վրա, առաջացնելով լուրջ խնդիրներ այդ ոլորտում՝ ընտանիքների փլուզում, ընտանեկան բռնություն, երեխաների լքվածություն, անօթևան մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում

հայտնված, հակասոցիալական վարք դրսևորած, հաշմանդամ, զարգացման խնդիրներ ունեցող երեխաներ և այլն:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալների համաձայն աղքատության մակարդակը ունի բնակչության 30%-ը, այսինքն երկրի 10 բնակչից 3-ը ամսական 40,264 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր են ունեցել [1]: Այս ընտանիքները դժվարանում են հոգալ ոչ միայն իրենց երեխաների կրթության և զարգացման համար անհրաժեշտ ծախսերը, այլև շատ հաճախ խնդիրներ են ունենում նույնիսկ երեխաների համար սնունդ, հագուստ, կենցաղային նվազագույն պայմաններ ապահովելիս: Բնականաբար, ընտանիքում նման հիմնախնդիրների առկայության դեպքում հաճախ կրթությունը և երեխաների խնամքը դառնում են երկրորդային, երրորդային խնդիրներ և դրանց քիչ է ուշադրություն դարձվում: Աստիճանաբար նման իրավիճակը պատճառ է դառնում երեխաների կրթությունից դուրս մնալու, վարքային խնդիրներ ձեռք բերելուն և արդյունքում՝ խնամքի և պաշտպանության հատուկ հաստատություններում հայտնվելուն:

Պաշտոնական վիճակագրական տվյալները, տարբեր միջազգային և հասարակական կազմակերպությունների վերլուծություններն ու հետազոտությունները ցույց են տալիս, որ խնամքի և պաշտպանության հաստատությունները հիմնականում կարողանում են իրականացնել միայն երեխաների խնամքը, կրթության կազմակերպումը, սակայն երեխաների ուսումնական մոտիվացիան հաճախ այդպես էլ չի փոխվում, հուզական և վարքային խնդիրները այդպես էլ չեն հաղթահարվում: Հիմնական կարիքները, որոնք կարողանում են հոգալ նմանատիպ հաստատությունները՝ խնամքը, սնունդն ու հագուստն են, որոնք էլ երբեմն չեն իրականացվում երեխաների խնամքի և դաստիարակության պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների պահանջներին համապատասխան (օրինակ, երեխաների հագուստ ընտրելու հնարավորությունը /չափորոշիչ 6/, կամ նրանց համար անհատական և ընտանեկան պայմաններին մոտ տարածք հատկացնելը /չափորոշիչ 4 և 7/) [2]:

Հանրապետության 4 հաստատություններում իրականացված հետազոտությունները փաստում են նաև, որ երեխաների 30.9%-ը հաստատությունում հայտնվել են սոցիալ-տնտեսական խնդիրների, իսկ 13%-ը՝ ընտանիքներում առկա սոցիալ-հոգեբանական տարաբնույթ խնդիրների պատճառով, սակայն այդ երեխաներից շատերը ճանաչվում են նաև որպես ԿԱՊԿՈՒ՝ հիմնականում հուզական ոլորտի խնդիրների կամ ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարման կրթական կարիքներով [3]: Նշված խնդիրները հաճախ պայմանավորված են ընտա-

նիքներում տիրող հուզական մթնոլորտով, կրթությունից դուրս մնալով կամ ուսման նկատմամբ ցածր շահագրգռվածությամբ: Նշված սոցիալ-հոգեբանական խնդիրները հաճախ այդպես էլ չեն հաղթահարվում հաստատության պայմաններում: Բացի այդ, երեխաների ծնշող մեծամասնությունը՝ 90%-ից ավելին, կարծում են, որ առավել երջանիկ կլինեին, եթե ապրեին իրենց ընտանիքներում: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է ընտանիքների հետ կանխարգելիչ և վաղ միջամտության աշխատանքների իրականացման կարևորությունը, այլ ոչ թե դրանց հետևանքները համապատասխան հաստատություններում հոգալը:

Խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվող երեխաների ծնողներն իրավունք ունեն շփվելու, հաղորդակցվելու իրենց երեխաների հետ: Սակայն հաճախ ֆինանսական խնդիրները, հաստատության կանոնները և տրանսպորտային դժվարությունները նվազեցնում են երեխայի հետ հանդիպելու հաճախականությունը կամ այն դարձնում անհնար:

Ըստ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության (ԿԳՆ) վերջին վիճակագրության, ավելի քան 2650 երեխաներ հաճախում են 23 հատուկ տիպի կրթական հաստատություններ, որոնցից 22-ը նախատեսված են հաշմանդամություն ունեցող երեխաների համար, միայն մեկն է նախատեսված հակասոցիալական վարքագիծ ունեցող երեխաների համար [4]: Հատուկ դպրոցներում երեխաների նման թվի առկայությունը մի կողմից պայմանավորված է համայնքներում զարգացման տարաբնույթ խնդիրներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ

ծառայությունների և ներառական կրթություն իրականացնող դպրոցների բացակայությամբ, իսկ մյուս կողմից՝ ընտանիքների անբարենպաստ նյութական և բարոյահոգեբանական պայմաններով, ծնողների կողմից երեխաների նկատմամբ անհրաժեշտ խնամքի, դաստիարակության, առաջնային սոցիալական հսկողության պարտականություններն անտեսելու կամ անկարողության պատճառով, դրանք չիրականացնելու հանգամանքով: Քանի որ հատուկ դպրոցները հիմնականում տեղակայված են կամ մայրաքաղաքում (օրինակ, լսողության խանգարումներով երեխաների համար նախատեսված դպրոցը) կամ՝ մարզկենտրոններում ու համեմատաբար մեծ քաղաքներում, ծնողները հաճախ ստիպված են լինում երեխային թողնել հատուկ դպրոցում գիշերելու՝ երբեմն տարածության, երբեմն՝ նյութական պատճառներով:

2013թ-ին «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից իրականացվող “Կառավարության հետ Համագործակցությամբ Երեխայի Բարեկեցության Բարեփոխում” ծրագրի շրջանակներում հատուկ դպրոցներում կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ դպրոցներում սովորող երեխաների 60%-ից ավելին ունենին խոսքի խանգարումներ, հենաշարժական համակարգի խախտումներ, հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ կամ վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ [5]: Ինչպես տեսնում ենք նշված կարիքները այնպիսի խանգարումներ էին, որոնք բոլորովին չէին խոչընդոտի այդ երեխաների ներառական կրթություն իրականացնող

դպրոցներում կամ պարզապես սովորական հանրակրթական դպրոցներում սովորելու հարցում: Հետազոտությունները ցույց տվեցին նաև, որ ուսումնասիրված հատուկ դպրոցների աշակերտների շուրջ 9 %-ը չունի հատուկ դպրոց հաճախելու համար համապատասխան հիմքեր:

Հատուկ դպրոցներում սովորող երեխաների ընտանիքների հետ կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ ընտանիքների շուրջ 32.9 %-հանդիսանում է “Ընտանեկան նպաստ” համակարգի շահառու, իսկ 25%-ը ունեն սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինչի հետևանքով երեխաներից շատերը դուրս էին մնացել կրթությունից կամ հաճախել էին դպրոց շատ մեծ բացթողումներով: Արդյունքում՝ այս երեխաներն իրենց գիտելիքներով հետ էին մնացել հասակակիցներից և ի վերջո՝ Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ժամանակ ստացել ԿԱՊԿՈՒ երեխայի կարգավիճակ, օրինակ, ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարում կրթական կարիքով: Հարցումները պարզեցին, որ հատուկ դպրոցներում սովորող երեխաների 49.8 %-ը գիշերում է հատուկ դպրոցում:

Հետազոտությունների արդյունքում բացահայտվեց նաև, որ հատուկ դպրոցներում երեխաների հայտնվելու պատճառներից մյուսը տվյալ ընտանիքի երեխաներից որևէ մեկի հաճախումն էր, ինչից հետո ընտանիքի մյուս երեխաները նույնպես անկախ այն հանգամանքից զարգացման խնդիր ունեն, թե ոչ՝ հայտնվել էին հատուկ դպրոցում: Հատուկ դպրոց հաճախելու համար գնահատվում են

երեխաների կրթական կարիքները, իսկ քանի որ այս երեխաները հիմնականում խոցելի ընտանիքներից են, հետևաբար հուզական ոլորտի խանգարումներ կան ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարումներ հայտնաբերելը այնքան էլ դժվար չէ: Ծնողները հաճախ նման ձևով են լուծում իրենց ընտանիքների առջև ծառացած խնդիրները: Բնականաբար, մի քանի տարի հատուկ դպրոցում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար նախատեսված ուսումնական ծրագրերով սովորելուց հետո էլ ավելի էր մեծանում զարգացման մակարդակի տարբերությունները իրենց հասակակիցների հետ, հետևաբար՝ առավել չափով էր հիմնավորվում հատուկ դպրոցում հայտնվելու պատճառները:

Նշված հիմնախնդրից խուսափելու նպատակով բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտոնի /ԲՀՄԳԿ/ կողմից տրամադրվող եզրակացության ձևաթղթի մեջ կատարվեցին փոփոխություններ, ինչի արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներից որոշների, օրինակ, ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարման դեպքում որպես առաջարկվող հաստատություն նշվում է միայն ներառական կրթություն իրականացնող դպրոցը: Հետևաբար, հատուկ դպրոցը նմանատիպ եզրակացություն ունեցող երեխաներին իրավասու չէ ընդունել և նրանք հայտնվում են ներառական կրթություն իրականացնող դպրոցներում:

Զարգացման խնդիրներ ունեցող երեխաների մյուս հիմնախնդիրը կրթությունից դուրս մնալն է: Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի (UNICEF)

կողմից իրականացված հետազոտությունների համաձայն նախադպրոցական տարիքի հաշմանդամություն ունեցող երեխաների միայն 35%-ն է հաճախել կամ հաճախում մանկապարտեզ, իսկ դպրոցական տարիքի հաշմանդամություն ունեցող երեխաների 18%-ը՝ ընդհանրապես չի գնում դպրոց: Այս առումով նշանակալից տարբերություններ կան Երևանի և մարզային, հատկապես գյուղական համայնքների միջև [6]: Եթե Երևանում դպրոց չեն հաճախում երեխաների 13%-ը, ապա մարզերում այդ ցուցանիշը 18% է, իսկ գյուղական համայնքներում գրեթե կրկնապատկվում է՝ հասնելով 23%-ի:

Այս դեպքում նույնպես պատճառները տարբեր են, մի դեպքում տվյալ համայնքում բացակայում են հատուկ կամ ներառական կրթություն իրականացնող դպրոցները, մյուս դեպքերում՝ ծնողը պարզապես թերահավատորեն է վերաբերում դպրոցին, կարծում է, որ այն ոչինչ չի տա իր երեխային, ուստի խախտում է երեխայի կրթության իրավունքը՝ երեխային պարտադիր կրթությունից դուրս թողնելով: Այս հարցում իրենց լրջագույն մասնակցությունը պետք է ունենան տվյալ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինները, որոնք թերևս պետք է տիրապետեն այն տեղեկատվությանը, թե քանի երեխա է իրենց համայնքում կրթությունից դուրս մնացել և միջոցառումներ կազմակերպեն նշված խնդիրը լուծելու համար: Այս հարցում իրենց կարևոր մասնակցությունն են ունենում նաև համալիր սոցիալական ծառայությունների դեպք վարողները և համայնքային սոցիալական աշխատողները, ովքեր տիրապետում են համայնքի ռիսկային ընտանիքների և երեխաների մասին ողջ տեղեկատվությանը:

Նման խնդիրներ ծագում են ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության հետ կապված, այլև երեխային պարզապես հասարակության մեջ ներառման տեսակետից: Հաճախ այսպիսի երեխաներից շատերը, մասնավորապես փոքր համայնքներում, մնում են տանը փակված և նույնիսկ հարևանները կարող են չիմանալ նրանց գոյության մասին: Ծնողներին նման քայլերի դրդող պատճառները տարբեր են՝

- ծնողները խուսափում են հաշմանդամ երեխաներին հասարակության մեջ տանել՝ վախենալով բացասական վերաբերմունքից,

- նախադպրոցական եւ հանրակրթական որոշ ուսումնական հաստատություններ չեն ընդունում հաշմանդամություն ունեցող երեխաներին, հաճախ հիմնավորելով մասնագետների բացակայությամբ և մանկավարժների մասնագիտական հմտությունների պակասով,

- հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների հետ իրազեկող աշխատանքներ գրեթե չեն տարվում, ինչի արդյունքում ծնողները հաճախ չգիտեն էլ իրենց և իրենց երեխայի իրավունքները, առկա հնարավորությունները, խնդիրների լուծման հնարավոր ուղիները: Այս ծնողները հիմնականում առավել իրազեկ են առողջապահական խնդիրներից և հիմնականում կարողանում են լուծել միայն երեխաների առողջության, ֆիզիկական վիճակի հետ կապված որոշ հարցեր:

Ինչպես տեսնում ենք, նշված հիմնախնդիրները հանգեցնում են հաշմանդամություն ունեցող երեխաների մեկուսացման և չեն լուծում նրանց ներառման համար առաջադրված խնդիրները:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար լավագույն տարբերակը համայնքներում համապատասխան ծառայությունների առկայությունն է, ինչը հնարավորություն կտա երեխային և նրա ընտանիքին ցուցաբերել համալիր աջակցություն, տրամադրել երեխայի համար անհրաժեշտ հոգեբանամանկավարժական, սոցիալ-վերականգնողական և այլ ծառայություններ: Կենտրոնները կաջակցեն ընտանիքին երեխայի խնամքի և զարգացման գործառնությունները լիարժեք իրականացնելու հարցում: Դա իր հերթին կնպաստի ընտանիքի տնտեսական դժվարությունների մեղմացմանը, ընտանիքի ամրապնդմանը և ընտանեկան արժեքների պահպանմանը: Սրա հետ կապված, կբարձրանա ծնողների իրազեկվածության մակարդակը մատուցվող ծառայությունների մասին:

Երեխաների մյուս ռիսկային խումբը վարքի խանգարումներ ունեցող երեխաներն են, ովքեր տարաբնույթ հանցանքների արդյունքում հայտնվում են փողոցում, զբաղվում են մարմնավաճառությամբ, գողության: Իհարկե, այս ուղղությամբ մեր հանրապետությունում բավականին մեծ աշխատանքներ են տարվել, ինչի արդյունքում այս երեխաները հիմնականում շուտ հայտնաբերվում և ուղղորդվում են տարբեր հաստատություններ: ՀՀ Ոստիկանության տրամադրած տվյալների համաձայն մեր հանրապետությունում տարեցտարի նվազում են անչափահասների կողմից հանցագործությունների կատարման դեպքերը, հայտնաբերվում են մուրացիկ և թափառաշրջիկ երեխաները, հայտնաբերվում և կանխվում են ընտանեկան բռնությունների դեպքերը, կանխարգելիչ

միջոցառումներ են իրականացվում ոստիկանությունում հաշվառման մեջ գտնվող անչափահասների, ինչպես և նրանց ծնողների հետ [7]:

Սակայն այստեղ խնդիրը նույնպես մնում է չլուծված, քանի որ երեխաները կամ ստիպված են լինում սովորել հակասոցիալական վարք ունեցող երեխաների համար նախատեսված Հանրապետական N 1 հատուկ կրթահամալիրում կամ ժամանակավորապես տեղավորվում են որևէ հաստատությունում, օրինակ ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում, այնուհետև վերադարձվում ընտանիքներին: Սակայն, քանի որ այս դեպքում նույնպես համայնքներում հիմնականում բացակայում են սոցիալ-հոգեբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, ուստի խնդիրը կրկին մնում է չլուծված, լավագույն դեպքում երեխան հայտնվում է ոստիկանության տեսադաշտում:

Հայաստանի հանրապետությունում հատուկ հաստատություններում, մանկատներում ներկայումս ապրում են շուրջ 4500 երեխաներ: Կարծում ենք երեխաների նման քանակի պատճառներից մեկը խնամատար ընտանիքների ինստիտուտի ոչ լիարժեք աշխատանքն է: Խնամատար ընտանիքն առանց ծնողական խնամքի մնացած երեխայի դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկն է, որն իրականացվում է պայմանագրի հիման վրա: Այն առանց ծնողական խնամքի մնացած երեխային տալիս է ընտանեկան միջավայրում մեծանալու իրական հնարավորություն՝ այդտեղից բխող բոլոր դրական հետևանքներով: 2008թ. հունիսին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց խնամատար ընտանիքի մոդելը ներդ-

նելու մասին: Խնամատար ինստիտուտը ՀՀ-ում դեռևս գտնվում է կայացման փուլում, սակայն դրա կայացումը մեծապես կնպաստի հաստատությունների բեռնաթափմանը և երեխաների համար առավել հարմարավետ և բարենպաստ պայմաններ ապահովելուն: Այս պարագայում նույնպես համայնքային մակարդակում առաջարկվող սոցիալ-հոգեբանական ծառայությունների առկայությունը առավել նպաստավոր պայմաններ կստեղծեն խնամատար ընտանիքներում մեծացող երեխաների և խնամատար ծնողների համար՝ ապահովելով անհրաժեշտ աջակցությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին զարգացման խանգարումներ չունեցող երեխաների համար նախատեսված մանկատներում խնամվող երեխաների թիվը նախորդ տարիների համեմատ նվազել է, սակայն հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում յուրաքանչյուր տարի ավելանում է՝ պայմանավորված համապատասխան մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների (ցերեկային կամ վերականգնողական կենտրոններ և այլն) թվի պակասով, ինչպես նաև պետական հոգածության կարիք ունեցող երեխաների թվի աճով [8]:

Խնամքի հաստատությունների և մանկատների բեռնաթափման նպատակով մի շարք միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվում են ծրագրեր, որոնք նպատակ ունեն համայնքներում առաջարկել այլընտրանքային ծառայություններ՝ ցերեկային կենտրոններ:

Հանրապետության տարբեր հա-

մայնքներում կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ հիմնականում համայնքներում գրեթե բացակայում են անհրաժեշտ այլընտրանքային սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական ծառայությունները [9]: Բնականաբար, այս պայմանները բնավ չեն նպաստում հաստատությունների բեռնաթափման գործընթացին: Եթե երեխան վերադառնում է ընտանիք, սակայն նրան և ընտանիքին չեն առաջարկվում և տրամադրվում համապատասխան ծառայություններ, բնականաբար, հաստատություն հետ վերադառնալու հավանականությունը մեծանում է: Քանի որ, եթե ընտանիքը ինքնուրույն կարողանար լուծել երեխայի և ընտանիքի հիմնախնդիրները, երեխան արդեն իսկ չէր հայտնվի որևէ հաստատությունում:

Նշված հիմնախնդիրները թե՛ համայնքային, թե՛ մարզային մակարդակում լուծելու և աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու հարցում մեծապես կնպաստեն համայնքներում ստեղծված այլընտրանքային կենտրոնները, որոնք սերտորեն համագործակցելով սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների, սոցիալական ապահովության տարածքային կենտրոնների, համալիր սոցիալական ծառայությունների տարածքա-

յին կենտրոնների, մասնավորապես դեպք վարողների հետ, կկարողանան արագ արձագանքել և տրամադրել անհրաժեշտ ծառայություններ՝ կանխելով երեխաների մուտքը տարբեր տիպի հաստատություններ:

Այս կենտրոններում տեղակայված մասնագիտական ռեսուրսները հնարավորություն կտան առավել շուտ հայտնաբերել և արձագանքել դեպք վարողների կողմից հայտնաբերված ռիսկային ընտանիքներին, կատարել արհեստավարժ մասնագիտական ուսումնասիրություն և կարիքների գնահատում, որից հետո կկազմակերպեն միջամտության և աջակցության միջոցառումներ և ծառայություններ, ինչպես նաև մշտադիտարկում և վերահսկողություն: Վերոնշյալ կենտրոնների դերը հատկապես մեծ է հաստատությունների բեռնաթափման գործընթացին աջակցության հարցում, որոնք կկարողանան ընտանիքներին և երեխաներին առաջարկել բոլոր այն ծառայությունները, որոնց բացակայության հետևանքով երեխան հայտնվել էր հաստատությունում:

Չետևաբար, ընտանիքը զգալով պետության հոգածությունը և համայնքային մակարդակում տրամադրվող այս աջակցության կարևորությունը, սատար կկանգնի այս գործընթացին՝ ինքն իր հերթին նախաձեռնելով որոշակի գործողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.armstat.am/file/doc/99493318.pdf>
2. Երեխաների խնամքի և դաստիարակության պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներ
3. ՀՀ երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատություններում գտնվող երեխաների, նրանց ընտանիքների կարիքների, այդ երեխաների ծագման համայնքների սոցիալական խնդիրների, սոցիալական պաշտպանության ենթակառուցվածքների վիճակի ու հնարավորությունների խորը գնահատման արդյունքների վերլուծություն, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2015
4. <http://www.osce.org/hy/yerevan/157271?download=true>
5. Հատուկ կրթական համակարգի բարեփոխումները քաղաքականության մշակման ծրագրերի համատեքստում, Երևան, 2013
6. <http://unicef.am/uploads/file/hunupp%20ներառման%20մասին%20է.pdf>
7. <http://www.police.am/news/view/ոստիկանությունում-տեղի-ունեցավ-հանդիպում-լրագրողների-հետ.html>
8. Հայաստանի հանրապետության կառավարության որոշում, 13 նոյեմբերի 2014 թվականի N 1273 - Ն
9. ՀՀ երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատություններում գտնվող երեխաների, նրանց ընտանիքների կարիքների, այդ երեխաների ծագման համայնքների սոցիալական խնդիրների, սոցիալական պաշտպանության ենթակառուցվածքների վիճակի ու հնարավորությունների խորը գնահատման արդյունքների վերլուծություն, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2015

РЕЗЮМЕ

АНАЛИЗ ПРОБЛЕМЫ ПОЯВЛЕНИЯ ДЕТЕЙ ОКАЗАВШИХСЯ В ТРУДНЫХ ЖИЗНЕННЫХ СИТУАЦИЯХ В СПЕЦИАЛЬНЫХ УЧЕРЕЖДЕНИЯХ

А. О. Сваджян

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна,
кандидат педагогических наук

В статье анализируются причины, по которым дети находятся в трудных жизненных условиях, ока-

зываются в специальных учреждениях.

SUMMARY

ANALYSIS OF PROBLEMS ADVENT OF CHILDREN WHO ARE IN DIFFICULT LIFE SITUATIONS IN THE SPECIAL INSTITUTIONS

A. H. Svajyan

associate professor at the chair of Special Pedagogy and Psychology

Khachatur Abovyan Armenian state pedagogical university,

Candidate of Pedagogical sciences

The article analyzes the reasons for which children found themselves in difficult living conditions appear in the special Institutions.